# ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N <<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/32>> /01/

«13» օգոստոս 2021թ.

Ք. Հրազդան

Հրազդանի համայնքապետարանն ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<<Էդիտա>> ԱԿ -ն, ի դեմս տնօրեն Դերենիկ Վարդանյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **<<Հրազդան համայնքի խաղահրապարակների կառուցման>> աշխատանքներ** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1Աշխատանքների առնվազն 100/մեկ հարյուր/տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են

սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման [illegible] արձանագրություն.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **63 900 000/վաթսուներեք միլիոն ինը հարյուր հազար/ՀՀ դրամ, 10 650 000/տաս միլիոն վեց հարյուր հիսուն հազար/ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

**6.5** Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

**6.6** Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**6.7** Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի

այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**8.1** Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**8.2** Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

**8.3** Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

**8.4** Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

**8.5** Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**8.8** Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

**8.9** Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

**8.10** Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

**8.11** Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է

բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

**8.12** Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**8.13** Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

**8.14** Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15** Պայմանագրով նախատեսված աշխատանքների մի մասի կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության

հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001937

ՀՎՀՀ 03000453

Համայնքի ղեկավար՝

________ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ԷԴԻՏԱ» ԱԿ

Գեղարքունիքի մարզ , գ. Գեղամա 2-րդ փողոց,

3-րդ, փողոց, նրբ.25 տուն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ 220203335553000

ՀՎՀՀ 08601046

ՏՆՕՐԵՆ՝

________ Ռ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված թիվ 1

«13» օգոստոս 2021 թ. կնքված

<<ԿՄՀՔ-ԳՀԱԾՁԲ-21/32>> /01/_ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ–ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հրազդան համայնքի Հարավային թաղամասի Սպանդարյան 6, Երևանյան 8, Մյասնիկյան 11 շենքերի հարակից տարածքի խաղահրապարակիկառուցմաննախագծանախահաշվայինփաստաթղթերիմշակում»

| NN | Աշխատանքների անվանումը | Չափման միավոր | Քանակ | Միավորի ընդհանուր արժեքը hազ. դրամ | Ընդհանուր արժեքը hազ. դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | 4 | 5 | 5 | 6 |
| | Քանդման աշխատանքներ | | | | |
| 1 | Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա | տոն | 36.20 | 1.26 | 45.73 |
| 2 | Աղբի տեղափոխում մինչև 6կմ | տոն | 36.20 | 2.06 | 74.57 |
| 3 | III կարգի բնահողի մշակում ձեռքով | մ$^3$ | 296.00 | 2.36 | 697.09 |
| 4 | Բնահողի ետլիցքձեռքով մշակված բնահողից տոփանելով | մ$^3$ | 104.00 | 1.34 | 138.94 |
| 5 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/ | գմ | 419.0 | 0.94 | 394.71 |
| 6 | Մետաղական ցանկապատերի ապամոնտաժում | գմ | 6.5 | 0.50 | 3.28 |
| 7 | Ասֆալտբետոնե շերտի քանդում | մ$^3$ | 84.60 | 4.22 | 356.62 |
| 8 | Ասֆալտբետոնե ծածկույթի նախաշերտի քանդում | մ$^3$ | 169.20 | 0.72 | 122.23 |
| 9 | Մետաղական զրուցարանի ապամոնտաժում | հատ | 1 | 13.37 | 13.37 |
| 10 | Խաղասարքի ապամոնտաժում | հատ | 4 | 1.65 | 6.60 |
| 11 | Տարածքի համահարթեցում մեխանիզմով | մ$^2$ | 1040.0 | 0.05 | 56.80 |
| 12 | Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 6կմ | տ | 324.00 | 2.92 | 944.88 |
| | Ընդամենը | | | 0.00 | **2854.81** |
| | Տոկոսը ամբողջի համեմատ | | | 0.00 | **10.81%** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | <u>Կառուցողական աշխատանքներ</u> | | | 0.00 | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10 սմ հաստությամբ | մ³ | 14.25 | 6.01 | 85.61 |
| 2 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի, B15 դասի բետոնե հիմքով | գմ | 147.0 | 10.47 | 1539.57 |
| 3 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 80x150մմ չափերի, B15 դասի բետոնե հիմքով | գմ | 328.0 | 4.65 | 1525.70 |
| 4 | Խճի նախապատրաստական շերտ h=15սմ | մ² | 112.0 | 1.54 | 172.44 |
| 5 | Բիտումի տարածում /1մ² - 4.12կգ բիտումի ծախսով/ S=42.0մ² | տ | 0.4620 | 280.88 | 129.76 |
| 6 | Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնե խառնուրդից, h=5սմ | մ² | 112.0 | 4.28 | 479.16 |
| | Ընդամենը | | | 0.00 | **3932.25** |
| | Տոկոսը ամբողջի համեմատ | | | 0.00 | **14.89%** |
| | <u>Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</u> | | | 0.00 | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 12սմ հաստությամբ | մ³ | 83.76 | 11.28 | 944.74 |
| 2 | Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով | մ³ | 27.92 | 17.32 | 483.53 |
| 3 | Սալիկապատում բետոնե ձևավոր սալիկներով, երկրորդ շերտը գունավոր 6սմ հաստությամբ | մ² | 698.0 | 6.87 | 4792.68 |
| | Ընդամենը | | | 0.00 | **6220.95** |
| | Տոկոսը ամբողջի համեմատ | | | 0.00 | **23.48%** |
| | <u>Ֆուտբոլիդաշտիկառուցում</u><br><u>Հիմնատակիպատրաստում</u> | | | 0.00 | |
| 1 | Մակերեսներիմեքենայացվածհարթեցում | մ² | 385 | 0.01 | 5.41 |
| 2 | Մակերեսներիհարթեցումձեռքով | մ² | 304 | 0.21 | 65.08 |
| 3 | Հիմնատակի 1-ինշերտիպատրաստում 5սմհաստությամբավազով | մ³ | 19.25 | 5.25 | 101.05 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Հիմնատակի 1-ինշերտիխոնավեցում | մ$^3$ | 19.25 | 0.29 | 5.65 |
| 5 | Հիմնատակի 2-րդշերտիպատրաստումբազալտեխճով 15սմհաստությամբ | մ$^2$ | 385 | 1.56 | 598.86 |
| 6 | Հիմնատակի 2-րդշերտիխոնավեցում | մ$^3$ | 57.75 | 0.29 | 16.94 |
| 7 | Հիմնատակի 2-րդշերտիխտացումթրթռագլդոնով 10 անցումով | մ$^3$ | 57.75 | 1.67 | 96.43 |
| 8 | Հիմնատակի 3-րդշերտիպատրաստումբազալտեխճով 5սմհաստությամբ | մ$^2$ | 385 | 0.88 | 338.15 |
| 9 | Հիմնատակի 3-րդշերտիխոնավեցում | մ$^3$ | 19.25 | 0.29 | 5.65 |
| 10 | Հիմնատակի 3-րդշերտիխտացումթրթռագլդոնով 10 անցումով | մ$^3$ | 19.25 | 1.67 | 32.14 |
| 11 | Հիմնատակի 4-րդշերտիպատրաստում 3սմհաստությամբգրանիտեավազով | մ$^3$ | 11.55 | 5.25 | 60.63 |
| 12 | Հիմնատակի 4-րդշերտիխտացումթրթռագլդոնով 1 անցումով | մ$^3$ | 11.55 | 0.15 | 1.69 |
| 13 | Արհեստականխոտիփաթեթայինծածկույթիփռումբարձրորակ /3սմխոտածածկույթ/ | մ$^2$ | 385 | 6.05 | 2327.75 |
| 14 | Կվարցայինավազիծածկույթ 15մմ/180քմ/ | մ$^3$ | 5.8 | 7.98 | 46.30 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **3701.73** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **14.02%** |
| | <u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u> | | | 0.00 | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ | մ$^3$ | 1.35 | 10.85 | 14.65 |
| 2 | Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի | գմ | 88.7 | 4.18 | 370.73 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **385.38** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **1.46%** |
| | <u>Մետաղականցանկապատիկառուցում</u> | | | 0.00 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մարզադաշտիցանկապատի III-րդկարգիգրունտներիքանդումփոսերումձեռքով | մ³ | 9.3 | 2.36 | 21.90 |
| 2 | Բետոնեհիմքերիպատրաստումկանգնակներիտակ B12,5 դասիբետոնով | մ³ | 9.3 | 46.43 | 431.79 |
| 3 | Մետաղականցանցավորցանկապատիպատրաստումևտեղադրում, պողպատետարրերիցուղղանկյունխողովակ, ժապավեն, անկյունակ | տ | 4.95 | 705.11 | 3490.31 |
| 4 | ՄետղականցանցիեռակցումՊողպատե, հյուսված, "Ռաբիցա", d=2,0մմ, բջիջը 50x50մմ | մ² | 408 | 1.02 | 415.52 |
| 5 | Ցանկապատիերկշերտյուղաներկում, դռնակիհետմիասին | մ² | 842 | 1.26 | 1063.99 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **5423.51** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **20.54%** |
| | **Ֆուտբոլիդարպասիկառուցում/ 2հատ/** | | | 0.00 | |
| 1 | Բետոնեհիմքերիպատրաստում B12,5 դասիծանրբետոնով | մ³ | 1.15 | 46.43 | 53.39 |
| 2 | Մետաղականդարպասիպատրաստումևտեղադրում | տ | 0.23 | 153.05 | 35.20 |
| 3 | Մետաղականուղղանկյունխողովակ 80*80*4մմ | գմ | 16.7 | 6.81 | 113.78 |
| 4 | Մետաղականուղղանկյունխողովակ 40*40*2մմ | գմ | 25.6 | 1.32 | 33.85 |
| 5 | Մետղականթերթ 10մմհաստությամբ | մ² | 0.4 | 58.25 | 23.30 |
| 6 | Մետաղականմասերիերկտակներկում | մ² | 46 | 0.72 | 32.90 |
| 7 | Ֆուտբոլիդարպասիցանց | հատ | 2 | 31.57 | 63.15 |
| 8 | Ներկանյութ | կգ | 28 | 9.24 | 258.64 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **614.20** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **2.33%** |
| | **Այլ աշխատանքներ** | | | 0.00 | |
| 1 | Փայտե նստատեղով նստարանների ձեռք բերում /պատրաստում/ | հատ | 13 | 38.16 | 496.07 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | և տեղադրում | | | | |
| 2 | Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում | հատ | 10 | 19.06 | 190.62 |
| 3 | Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում | հատ | 1 | 757.98 | 757.98 |
| 4 | Խաղահրապարակներում կապույտ ավազի շերտիստեղծում /15սմ հաստ./ | մ$^3$ | 18.00 | 3.29 | 59.27 |
| 5 | Նոր վարժասարք «դահուկներ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 418.08 | 418.08 |
| 6 | Նոր վարժասարք «հեծանիվ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 254.16 | 254.16 |
| 7 | Նոր վարժասարք «զուգափայտ 1» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 141.30 | 141.30 |
| 8 | Նոր վարժասարք «փոքրի մարզիկ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 168.18 | 168.18 |
| 9 | Բուսահողի մշակում էքսկավատորով, բարձելով ինքնաթափ | մ$^3$ | 31.8 | 0.53 | 16.83 |
| 10 | Բուսահողի տեղափոխում | տ | 60.42 | 7.46 | 450.70 |
| 11 | Բուսահողի փռումձեռքով կանաչ տարածքներում /15սմ հաստ./ | մ$^2$ | 212.0 | 1.95 | 413.96 |
| | Ընդամենը | | | | 3367.16 |
| | Տոկոսը ամբողջի համեմատ | | | | 12.75% |
| | Ընդամենը | | | | 26500.00 |
| | ԱԱՀ, 20% | | | | 5300.00 |
| | Ընդամենը | | | | 31800.00 |
| | Ամբողջ տոկոսը | | | | 100.00% |

«Հրազդան համայնքի Կենտրոն թաղամասի թիվ 10 և 8 շենքերի հարակից տարածքի խաղահրապարակի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում»

| N N | Աշխատանքների անվանումը | Չափման միավոր | Քանակ | Միավորի ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|
| | | | | հազ. դրամ | հազ. դրամ |
| 1 | 3 | 4 | 5 | 5 | 6 |
| | <u>Քանդման աշխատանքներ</u> | | | | |
| 1 | Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա | տոն | 23.20 | 1.24 | 28.78 |
| 2 | Աղբի տեղափոխում մինչև 6կմ | տոն | 23.20 | 2.02 | 46.94 |
| 3 | III կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 240.00 | 2.31 | 555.12 |
| 4 | Բնահողի ետլիցքձեռքով մշակված բնահողից տոփանելով | $մ^3$ | 84.00 | 1.31 | 110.22 |
| 5 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/ | գմ | 156.0 | 0.93 | 144.33 |
| 6 | Մետաղական ցանկապատերի ապամոնտաժում | գմ | 16.0 | 0.49 | 7.92 |
| 7 | Ասֆալտբետոնե շերտի քանդում | $մ^3$ | 60.50 | 4.14 | 250.48 |
| 8 | Ասֆալտբետոնե ծածկույթի նախաշերտի քանդում | $մ^3$ | 73.20 | 0.71 | 51.93 |
| 9 | Մետաղական զրուցարանի ապամոնտաժում | հատ | 1 | 13.14 | 13.14 |
| 10 | Խաղասարքի ապամոնտաժում | հատ | 1 | 1.62 | 1.62 |
| 11 | Տարածքի համահարթեցում մեխանիզմով | $մ^2$ | 620.0 | 0.05 | 33.26 |
| 12 | Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա և տեղափոխում մինչև 6կմ | տ | 124.00 | 2.86 | 355.16 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **1598.89** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **11.61%** |
| | <u>Կառուցողական աշխատանքներ</u> | | | 0.00 | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10 սմ հաստությամբ | $մ^3$ | 10.2 | 5.90 | 60.36 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի, B15 դասի բետոնե հիմքով | գմ | 126.0 | 10.29 | 1296.07 |
| 3 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 80x150մմ չափերի, B15 դասի բետոնե հիմքով | գմ | 215.0 | 4.57 | 982.22 |
| 4 | Խճի նախապատրաստական շերտ h=15սմ | $մ^2$ | 42.0 | 1.51 | 63.51 |
| 5 | Բիտումի տարածում /1$մ^2$ - 4.12կգ բիտումի ծախսով/ S=42.0$մ^2$ | տ | 0.1730 | 275.86 | 47.72 |
| 6 | Ծածկույթի պատրաստում մանրահատիկ ասֆալտբետոնե խառնուրդից, h=5սմ | $մ^2$ | 42.0 | 4.20 | 176.48 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **2626.36** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **19.06%** |
| | <u>Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում</u> | | | 0.00 | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 12սմ հաստությամբ | $մ^3$ | 13.44 | 11.08 | 148.89 |
| 2 | Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով | $մ^3$ | 4.48 | 17.01 | 76.20 |
| 3 | Սալիկապատում բետոնե ձևավոր սալիկներով, երկրորդ շերտը գունավոր 6սմ հաստությամբ | $մ^2$ | 112.0 | 6.75 | 756.00 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **981.09** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **7.01%** |
| | <u>Ֆուտբոլիդաշտիկառուցում</u><br><u>Հիմնատակիպատրաստում</u> | | | 0.00 | |
| 1 | Մակերեսներիմեքենայացվածհարթեցում | $մ^2$ | 180 | 0.01 | 2.48 |
| 2 | Մակերեսներիհարթեցումձեռքով | $մ^2$ | 90 | 0.21 | 18.92 |
| 3 | Հիմնատակի 1-ինշերտիպատրաստում 5սմհաստությամբավազով | $մ^3$ | 9 | 5.16 | 46.40 |
| 4 | Հիմնատակի 1-ինշերտիխոնավեցում | $մ^3$ | 9 | 0.29 | 2.59 |
| 5 | Հիմնատակի 2-րդշերտիպատրաստումբազալտեխճով 15սմհաստությամբ | $մ^2$ | 180 | 1.53 | 274.99 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Հիմնատակի 2-րդշերտիխոնավեցում | մ³ | 27 | 0.29 | 7.78 |
| 7 | Հիմնատակի 2-րդշերտիխտացումթրթռագլդոնով 10 անցումով | մ³ | 27 | 1.64 | 44.28 |
| 8 | Հիմնատակի 3-րդշերտիպատրաստումբազալտեխճով 5սմհաստությամբ | մ² | 180 | 0.86 | 155.27 |
| 9 | Հիմնատակի 3-րդշերտիխոնավեցում | մ³ | 9 | 0.29 | 2.59 |
| 10 | Հիմնատակի 3-րդշերտիխտացումթրթռագլդոնով 10 անցումով | մ³ | 9 | 1.64 | 14.76 |
| 11 | Հիմնատակի 4-րդշերտիպատրաստում 3սմհաստությամբգրանիտեավազով | մ³ | 5.4 | 5.16 | 27.84 |
| 12 | Հիմնատակի 4-րդշերտիխտացումթրթռագլդոնով 1 անցումով | մ³ | 5.4 | 0.14 | 0.78 |
| 13 | Արհեստականխոտիփաթեթայինծածկույթիփռումբարձրորակ /3սմխոտածածկույթ/ | մ² | 180 | 5.94 | 1068.86 |
| 14 | Կվարցայինավազիծածկույթ 15մմ/180քմ/ | մ³ | 2.7 | 7.84 | 21.17 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **1688.72** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **12.26%** |
| | <u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u> | | | 0.00 | |
| . | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ | մ³ | 0.73 | 10.66 | 7.78 |
| 2 | Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի | գմ | 58.2 | 4.10 | 238.91 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **246.69** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **1.79%** |
| | <u>Մետաղականցանկապատիկառուցում</u> | | | 0.00 | |
| 1 | Մարզադաշտիցանկապատի III-րդկարգիգրունտներիփանդումփոսերումձեռքով | մ³ | 6.1 | 2.31 | 14.11 |
| 2 | Բետոնեհիմքերիպատրաստումկանգնակներիտակ B12,5 դասիբետոնով | մ³ | 6.1 | 45.60 | 278.16 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Մետաղականցանցավորցանկապատիպատրաստումևտեղադրում, կողպատետարրերիցուղղանկյունխողովակ, ժապավեն, անկյունակ | տ | 2.85 | 692.52 | 1973.69 |
| 4 | ՄետաղականցանցիեռակցումՊողպատե, հյուսված, "Ռաբիցա", d=2,0մմ, բջիջը 50x50մմ | մ$^2$ | 264 | 1.00 | 264.06 |
| 5 | Ցանկապատիերկշերտյուղաներկում, դռնակիհետմիասին | մ$^2$ | 482 | 1.24 | 598.20 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **3503.61** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **22.71%** |
| | <u>Ֆուտբոլիդարպասիկառուցում/ 2հատ/</u> | | | 0.00 | |
| 1 | Բետոնեհիմքերիպատրաստում B12,5 դասիծանրբետոնով | մ$^3$ | 1.15 | 45.60 | 52.44 |
| 2 | Մետաղականդարպասիպատրաստումևտեղադրում | տ | 0.23 | 150.32 | 34.57 |
| 3 | Մետաղականուղղանկյունխողովակ 80*80*4մմ | գմ | 16.7 | 6.69 | 111.75 |
| 4 | Մետաղականուղղանկյունխողովակ 40*40*2մմ | գմ | 25.6 | 1.30 | 33.24 |
| 5 | Մետաղականթերթ 10մմհաստությամբ | մ$^2$ | 0.4 | 57.21 | 22.88 |
| 6 | Մետաղականմասերիերկտակներկում | մ$^2$ | 46 | 0.70 | 32.31 |
| | Ֆուտբոլիդարպասիցանց | հատ | 2 | 31.01 | 62.02 |
| 8 | Ներկանյութ | կգ | 14 | 9.07 | 127.01 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **476.23** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **3.46%** |
| | <u>Այլ աշխատանքներ</u> | | | 0.00 | |
| 1 | Փայտե նստատեղով նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում | հատ | 8 | 37.48 | 299.82 |
| 2 | Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում | հատ | 6 | 18.72 | 112.33 |
| 3 | Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և | հատ | | 744.45 | 744.45 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | [illegible] | | 1 | | |
| 4 | Խաղահրապարակներում կապույտ ավազի շերտիստեղծում /15սմ հաստ./ | $մ^3$ | 18.00 | 3.23 | 58.21 |
| 5 | Նոր վարժասարք «դահուկներ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 410.62 | 410.62 |
| 6 | Նոր վարժասարք «հեծանիվ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 249.63 | 249.63 |
| 7 | Նոր վարժասարք «զուգափայտ 1» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 138.78 | 138.78 |
| 8 | Նոր վարժասարք «փոքրի մարզիկ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 165.17 | 165.17 |
| 9 | Բուսահողի մշակում էքսկավատորով, բարձելով ինքնաթափ | $մ^3$ | 31.8 | 0.52 | 16.53 |
| 10 | Բուսահողի տեղափոխում | տ | 60.42 | 7.33 | 442.65 |
| 11 | Բուսահողի փռումձեռքով կանաչ տարածքներում /15սմ հաստ./ | $մ^2$ | 212.0 | 1.92 | 406.90 |
| | Ընդամենը | | | | 3045.09 |
| | Տոկոսը ամբողջի համեմատ | | | | 22.10% |
| | | | | | 14166.67 |
| | Ընդամենը | | | | 2833.33 |
| | ԱԱՀ, 20% | | | | 17000 |
| | Ընդամենը | | | | 100.00% |
| | Ամբողջ տոկոսը | | | | |

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հրազդան համայնքի Վանատուր թաղամասի թիվ 2 բնակելի շենքի հարակից տարածքի խաղահրապարակիկառուցմաննախագծանախահաշվայինփաստաթղթերիմշակում»

| NN | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի ընդհանուր արժեքը | Ընդհանուր արժեքը |
|---|---|---|---|---|---|
| | | | | հազ. դրամ | հազ. դրամ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| | Քանդման աշխատանքներ | | | | |
| 1 | Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա | տոն | 14.50 | 1.26 | 18.32 |
| 2 | Աղբի տեղափոխում մինչև 6կմ | տոն | 14.50 | 2.06 | 29.87 |
| 3 | III կարգի բնահողի մշակում ձեռքով | $մ^3$ | 240.00 | 2.36 | 565.21 |
| 4 | Բնահողի ետլիցքձեռքով մշակված բնահողից տոփանելով | $մ^3$ | 84.00 | 1.34 | 112.22 |
| 5 | Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 6կմ | տ | 34.00 | 2.92 | 99.15 |
| | Ընդամենը | | | 0.00 | **824.77** |
| | Տոկոսը ամբողջի համեմատ | | | 0.00 | **6.55%** |
| | Կառուցողական աշխատանքներ | | | 0.00 | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10 սմ հաստությամբ | $մ^3$ | 5.7 | 6.01 | 34.24 |
| 2 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի, B15 դասի բետոնե հիմքով | գմ | 145.0 | 10.47 | 1518.62 |
| 3 | Բազալտե եզրաքարերի տեղադրում 80x150մմ չափերի, B15 դասի բետոնե հիմքով | գմ | 45.0 | 4.65 | 209.32 |
| | Ընդամենը | | | 0.00 | 1762.18 |
| | Տոկոսը ամբողջի համեմատ | | | 0.00 | 14.00% |
| | Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում | | | 0.00 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 12սմ հաստությամբ | մ$^3$ | 15.84 | 11.28 | 178.66 |
| 2 | Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով | մ$^3$ | 5.28 | 17.32 | 91.44 |
| 3 | Սալիկապատում բետոնե ձևավոր սալիկներով, երկրորդ շերտը գունավոր 6սմ հաստությամբ | մ$^2$ | 132.0 | 6.74 | 889.12 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **1159.23** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **9.21%** |
| | Ֆուտբոլիդաշտիկառուցում<br>Հիմնատակիպատրաստում | | | 0.00 | |
| 1 | Մակերեսներիմեքենայացվածհարթեցում | մ$^2$ | 180 | 0.01 | 2.53 |
| 2 | Մակերեսներիհարթեցումձեռքով | մ$^2$ | 90 | 0.21 | 19.27 |
| 3 | Հիմնատակի 1-ինշերտիպատրաստում 5սմհաստությամբավազով | մ$^3$ | 9 | 5.25 | 47.25 |
| 4 | Հիմնատակի 1-ինշերտիխոնավեցում | մ$^3$ | 9 | 0.29 | 2.64 |
| 5 | Հիմնատակի 2-րդշերտիպատրաստումբազալտեխճով 15սմհաստությամբ | մ$^2$ | 180 | 1.56 | 279.99 |
| 6 | Հիմնատակի 2-րդշերտիխոնավեցում | մ$^3$ | 27 | 0.29 | 7.92 |
| 7 | Հիմնատակի 2-րդշերտիխտացումթրթռագլդոնով 10 անցումով | մ$^3$ | 27 | 1.67 | 45.08 |
| 8 | Հիմնատակի 3-րդշերտիպատրաստումբազալտեխճով 5սմհաստությամբ | մ$^2$ | 180 | 0.88 | 158.10 |
| 9 | Հիմնատակի 3-րդշերտիխոնավեցում | մ$^3$ | 9 | 0.29 | 2.64 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Հիմնատակի 3-րդշերտիխտացումթրթռագլդոնով 10 անցումով | մ³ | 9 | 1.67 | 15.03 |
| 11 | Հիմնատակի 4-րդշերտիպատրաստում 3սմհաստությամբգրանիտեավազով | մ³ | 5.4 | 5.25 | 28.35 |
| 12 | Հիմնատակի 4-րդշերտիխտացումթրթռագլդոնով 1 անցումով | մ³ | 5.4 | 0.15 | 0.79 |
| 13 | Արհեստականխոտիփաթեթայինծածկույթիփռումբարձրորակ /3սմխոտածածկույթ/ | մ² | 180 | 6.05 | 1088.30 |
| 14 | Կվարցայինավազիծածկույթ 15մմ/180քմ/ | մ³ | 2.7 | 7.98 | 21.55 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **1719.43** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **13.66%** |
| | <u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով</u> | | | 0.00 | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ | մ³ | 0.73 | 10.85 | 7.92 |
| 2 | Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի | գմ | 58.2 | 4.18 | 243.25 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **251.17** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **2.00%** |
| | <u>Մետաղականցանկապատիկառուցում</u> | | | 0.00 | |
| 1 | Մարզադաշտիցանկապատի III-րդկարգիգրունտներիքանդումփոսերումձեռքով | մ³ | 6.1 | 2.36 | 14.37 |
| 2 | Բետոնեհիմքերիպատրաստումկանգնակներիտակ B12,5 դասիբետոնով | մ³ | 6.1 | 46.43 | 283.22 |
| 3 | Մետաղականցանցավորցանկապատիպատրաստումևտեղադրում. | տ | 2.85 | 705.11 | 2009.57 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | պոլպատանախշիկոնցիկցիկ... (cut off) | | | | |
| 4 | ՄետղականցանցիետակցումՊողպատե, հյուսված, "Ռաբիցա", d=2,0մմ, բջիջը 50x50մմ | մ$^2$ | 264 | 1.02 | 268.87 |
| 5 | Ցանկապատիերկշերտյուղաներկում, դռնակիհետմիասին | մ$^2$ | 482 | 1.26 | 609.08 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **3185.10** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **25.31%** |
| | Ֆուտբոլիդարպասիկառուցում/ 2հատ/ | | | 0.00 | |
| 1 | Բետոնեհիմքերիպատրաստում B12,5 դասիծանրբետոնով | մ$^3$ | 1.15 | 46.43 | 53.39 |
| 2 | Մետաղականդարպասիպատրաստումևտեղադրում | տ | 0.23 | 153.05 | 35.20 |
| 3 | Մետաղականուղղանկյունխողովակ 80*80*4մմ | գմ | 16.7 | 6.81 | 113.78 |
| 4 | Մետաղականուղղանկյունխողովակ 40*40*2մմ | գմ | 25.6 | 1.32 | 33.85 |
| 5 | Մետղականթերթ 10մմհաստությամբ | մ$^2$ | 0.4 | 58.25 | 23.30 |
| 6 | Մետաղականմասերիերկտակներկում | մ$^2$ | 46 | 0.72 | 32.90 |
| 7 | Ֆուտբոլիդարպասիցանց | հատ | 2 | 31.57 | 63.15 |
| 8 | Ներկանյութ | կգ | 14 | 9.24 | 129.32 |
| | **Ընդամենը** | | | 0.00 | **484.89** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | 0.00 | **3.85%** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Այլ աշխատանքներ | | | 0.00 | |
| 1 | Մետաղական ճաղաշարի իրականացում | գմ | 30.00 | 10.30 | 308.91 |
| 2 | Փայտե նստատեղով նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում | հատ | 4 | 38.16 | 152.64 |
| 3 | Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում | հատ | 5 | 19.06 | 95.31 |
| 4 | Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում | հատ | 1 | 757.98 | 757.98 |
| | Խաղահրապարակներում կապույտ ավազի շերտիստեղծում /15սմ հաստ./ | մ$^3$ | 21.00 | 3.29 | 69.15 |
| 6 | Նոր վարժասարք «դահուկներ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 418.08 | 418.08 |
| 7 | Նոր վարժասարք «հեծանիվ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 254.16 | 254.16 |
| 8 | Նոր վարժասարք «զուգափայտ 1» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 141.30 | 141.30 |
| 9 | Նոր վարժասարք «փոքրի մարզիկ» ձեռք բերում և տեղադրում | հատ | 1 | 168.18 | 168.18 |
| 10 | Բուսահողի մշակում էքսկավատորով, բարձելով ինքնաթափ | մ$^3$ | 30.0 | 0.53 | 15.88 |
| 11 | Բուսահողի տեղափոխում | տ | 57.00 | 7.46 | 425.19 |
| 12 | Բուսահողի փռումձեռքով կանաչ տարածքներում /15սմ հաստ./ | մ$^2$ | 200.0 | 1.95 | 389.79 |
| | **Ընդամենը** | | | | **3196.57** |
| | **Տոկոսը ամբողջի համեմատ** | | | | **25.41%** |
| | **Ընդամենը** | | | | **12583.33** |

| | | | |
|---|---|---|---|
| | ԱԱՀ, 20% | | 2516.67 |
| | Ընդամենը | | 15100.00 |
| | Ամբողջ տոկոսը | | 100.00% |

Ընդամենը 3 ԾԱՎԱԼԱԹԵՐԹ–ՆԱԽԱՀԱՇԻՎԻ արժեքը

հազ. դրամ

| | | | |
|---|---|---|---|
| | Ընդամենը | | 53250,00 |
| | ԱԱՀ, 20% | | 10650,00 |
| | Ընդամենը | | 63900,00 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության

հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001937

ՀՎՀՀ 03000453

Համայնքի ղեկավար՝

-------------------Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԴԻՏԱ» ԱԿ

Գեղարքունիքի մարզ , գ. Գեղամա 2-րդ փողոց,

3-րդ, փողոց, նրբ.25 տուն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ 220203335553000

ՀՎՀՀ 08601046

ՏՆՕՐԵՆ՝

-------------------Դ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելվածթիվ 2

13 օգոստոսի 2021 թ. կնքված

<<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/32>> /01/ ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

## <<Հրազդան համայնքի խաղահրապարակների կառուցման>>

## աշխատանքների կատարման

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | <<Հրազդան համայնքի խաղահրապարակների կառուցման>> աշխատանքներ | Մի մասը Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, մյուս մասը՝ Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ Կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում: | 2021 թվականի հոկտեմբերի 30-ը: |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001937

ՀՎՀՀ 03000453

Համայնքի ղեկավար՝

---------------Ա.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԴԻՏԱ» ԱԿ

Գեղարքունիքի մարզ , գ. Գեղամա 2-րդ փողոց, 3-րդ, փողոց, նրբ.25 տուն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ 220203335553000

ՀՎՀՀ 08601046

ՏՆՕՐԵՆ՝

---------------Դ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 3

# ՎՃԱՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«13» օգոստոս 2021 թ. կնքված

<<ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-21/32>> /01/ ծածկագրով պայմանագրի

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 45231266 | <<Հրազդան համայնքի խաղահրապարակների կառուցման>> աշխատանքներ | Համայնքի մասնաբաժին | | | | | | | | 10 000 000 | 15 000 000 | 25 000 000 | 32 000 000 | 40 000 000 |
| | | | Պետության մասնաբաժին /սուբվենցիա/ | | | | | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 20 օրացույցային օրում: | | | | | | | |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հրազդանի համայնքապետարան

ք.Հրազդան Սահմանադրության հրապարակ 1, վարչական շենք

Հրազդանի ՏԳԲ

Հ/Հ 900122001937

ՀՎՀՀ 03000453

Համայնքի ղեկավար

------------------Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԷԴԻՏԱ» ԱԿ

Գեղարքունիքի մարզ , գ. Գեղամա 2-րդ փողոց, 3-րդ, փողոց, նրբ.25 տուն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Հ/Հ 220203335553000

ՀՎՀՀ 08601046

ՏՆՕՐԵՆ

------------------Դ.ՎԱՐԴԱՆՅԱՆ